Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն
ԱԲ ավագ դպրոցի ընդունելության քննություններ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Քննաշրջան՝ **2026 թ., ապրիլ**
Տևողություն՝ **1 ժամ 15 րոպե**
Հավելյալ նյութ՝ *Պատասխանների գրքույկ*

ՈՒՇԱԴԻՐ ԿԱՐԴԱԼ ԱՅՍ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ

Անհրաժեշտ է հետևել *Պատասխանների գրքույկի* կազմին գրված ցուցումներին:
Գրել մուգ կապույտ կամ սև գրիչով:
Քննության վերջում բոլոր թղթերը հավաքել և հանձնել մեկ տրցակով:

Յուրաքանչյուր հարցի հնարավոր առավելագույն միավորը նշված է հարցի վերջում՝ աջ կողմում:
Հարցերի միավորների ընդհանուր քանակը **32** է:

Այս փաստաթուղթը բաղկացած է 7 տպագիր և 1 դատարկ էջերից:

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ (20 ՄԻԱՎՈՐ)

Ուշադրությո՛ւն. Հայոց պատմություն բաժնում ներառված է 4 թեմա, պատմական յուրաքանչյուր պարբերափուլից՝ մեկական թեմա՝ բաղկացած երկու հարցից: Ընտրե՛ք թեմաներից ցանկացած <u>երկուսը</u> և պատասխանե՛ք հարցերին:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀԻՆ ԴԱՐԵՐՈՒՄ
ԹԵՄԱ՝ ՄԵԾ ՀԱՅՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԱՇԵՍՅԱՆ ԱՐՔԱՅԱՏՈՀՄԻ ՕՐՈՔ: (10 ՄԻԱՎՈՐ)

1. Թվարկե՛ք և բացատրե՛ք Տիգրան Բ Մեծի ռազմական հաջողություններից երկուսը (մեկ օրինակը պետք է լինի հայկական հողերի վերամիավորման ընթացքից, իսկ մյուս օրինակը՝ նվաճում):

Պատասխան: Տիգրան Բ Մեծը Մեծ Հայքի թագավորությանն է վերամիավորել Ծոփքը և Կորդուքը, որոնք հայկական մանր թագավորություններ էին, սակայն պատմականորեն եղել են Մեծ Հայքի մաս: Տիգրանն իր թագավորությանը վերամիավորել է նաև Մեծ Հայքի հարավարևելյան սահմանի երկայնքով ձգվող «70 հովիտներ» կոչվող տարածքը, որը հայերը զիջել էին Պարթևստանին, որպեսզի Տիգրանը հնարավորություն ունենար վերադառնալ պարթևական պատանդությունից և դառնար թագավոր: Հարցին պատասխանելիս աշակերտը պետք է ընտրի նախ Տիգրանի կողմից այս երեք տարածքներից որևէ մեկի՝ Մեծ Հայքի թագավորությանը վերամիավորման օրինակը և բացատրի հաջողության հանգամանքները: Բացատրենք Ծոփքի օրինակով. քարտեզին նայելիս պարզ է, որ Մեծ Հայքի արևմտյան սահմանը չուներ բնական որևէ պատնեշ, իսկ Ծոփքով սահմանը միշտ ձգվել է Արևմտյան Եփրատ գետի երկայնքով, որով սահմանը հեշտ էր պաշտպանել, հետևաբար բնական էր, որ Տիգրանը ձգտելու էր վերականգնել Մեծ Հայքի արևմտյան սահմանագիծը՝ միացնելով Ծոփքը, որը չուներ դիմադրելու որևէ ներքին ռեսուրս կամ արտաքին աջակիցներ:
Տիգրանի ռազմական հաջողությունների թվում առանձնահատուկ տեղ ունի Պարթևստանի նկատմամբ տարած հաղթանակը, որը սրընթաց գործողությունների արդյունք է: Ազատագրելով նախ «70 հովիտները»՝ այդտեղից հայկական բանակն արագ հայտնվում է Հյուսիսային Միջագետքում, իսկ այդտեղից սրընթաց գրոհով հասնում պարթևների ամառանոցային մայրաքաղաք Էքբատան, որտեղ գտնվում էր արքայից արքա Գոդերձ II-ը: Պարթևական վերնախավը հանկարծակիի է գալիս, և Գոդերձն ստիպված է լինում Տիգրանի պայմաններով հաշտություն կնքել: Տիգրան Մեծն այս ռազմարշավի ընթացքում հնարամտորեն օգտագործում է նշված տարածքների աշխարհագրական դիրքը և ռելիեֆը՝ ավելի բարձրադիր տարածքներից շարժվելով համեմատաբար ցածրադիր տարածքներ՝ հրաշալի իմանալով տեղանքը, քանի որ նախապես եղել էր պարթևական պատանդության մեջ:
Աշակերտը կարող էր ներկայացնել Տիգրանի ռազմական հաջողություններից ցանկացած այլ օրինակ:

2. Բացատրե՛ք, թե ինչու էր Տիգրան Բ Մեծը քաղաքներ կառուցում՝ շարադրելով առնվազն երկու պատճառներ, որոնցից առնվազն մեկը պարտադիր ներկայացրե՛ք մայրաքաղաքի օրինակով:

Պատասխան: Տիգրան Բ Մեծը գահակալել է Առաջավոր Ասիայում հելլենիստական դարաշրջանում, որի ժամանակ իշխած արքաներին բնորոշ էր նոր քաղաք(ներ)ի կառուցումը: Այդ դարաշրջանում այս ավանդույթը բնորոշ էր նաև Մեծ Հայքի թագավորությանը, օրինակ՝ Շամը կառուցել էր Սամոսատը, Արշամը՝ Արշամաշատը, Երվանդ IV-ը՝ Երվանդաշատը և Բագարանը, Արտաշես I-ը՝ Արտաշատը, Զարիշատը և այլ քաղաքներ: Տիգրան Մեծը շարունակում է այս մոտեցումը և հիմնում է մեկ տասնյակից ավելի քաղաքներ իր ընդարձակ պետության տարբեր հատվածներում:
Տիգրանի նվաճումների արդյունքում մայրաքաղաք Արտաշատը մնում է հսկայածավալ տերության հյուսիսարևելյան ծայրամասում, իսկ տերության ամենամեծ քաղաքը՝ Անտիոքը, չէր մտնում բուն հայկական տարածքների մեջ, հետևաբար անհրաժեշտ էր կառուցել նոր ստեղծված տերությանը հարիր և համեմատաբար կենտրոնական դիրք զբաղեցնող մայրաքաղաք, որը նաև պարտադիր կգտնվեր Մեծ Հայքի տարածքում: Այդ իսկ նպատակով Տիգրան Մեծը կառուցում է Տիգրանակերտ մայրաքաղաքը Աղձնիքում:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐՈՒՄ
ԹԵՄԱ՝ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ՀԱՅԱՍՏԱՆ: (10 ՄԻԱՎՈՐ)

1. Թվարկե՛ք Բագրատունյաց Հայաստանին ենթակա հայկական մանր թագավորություններից երեքը, բացատրե՛ք դրանց առաջացման մեկական ներքին և արտաքին նախադրյալներ:

Պատասխան: Բագրատունյաց թագավորությանը ենթակա թագավորություններից առաջինն ստեղծվել է 908 թ. Վասպուրականում՝ Արծրունի իշխանական ընտանիքի գլխավորությամբ: Շուրջ կես դար անց՝ 963 թ., ձևավորվել է Վանանդի (Կարսի) թագավորությունը, որից կարճ ժամանակ հետո՝ 978 թ.՝ Տաշիր-Զորագետի (Լոռու) թագավորությունը: Այս երկուսում իշխում էին Բագրատունյաց տոհմաճյուղեր, հետևաբար թագավորությունների առաջացումը Բագրատունյաց տոհմի ներսում ճյուղավորման արդյունք էր: 987 թ. թագավորություն է հռչակվում է նաև Սյունիքի իշխանների կողմից:
Ենթակա թագավորությունների առաջացումը բխում էր Հայաստանում զարգացած ավատատիրության ժամանակաշրջանի տրամաբանությունից, այսինքն՝ տեղերում իշխանական ընտանիքները զգալիորեն ընդարձակում էին իրենց հողային տիրույթները և միաժամանակ ստանում տնտեսական ավելի մեծ հնարավորություններ ու ձևավորում ավելի մեծ թվով զինված ուժեր: Այս պայմաններում նրանք այլևս չէին զգում կենտրոնական ուժեղ իշխանության՝ Բագրատունյաց թագավորի կարիքը և ձգտում էին ինքնուրույնության:
Հայաստանի ներսում ստեղծված իրավիճակից շտապում էին օգտվել նաև հարևանները՝ Արաբական խալիֆայությունը և Բյուզանդական կայսրությունը, որպեսզի թուլացնեն ու մասնատեն Բագրատունյաց թագավորությունը և հեշտությամբ գրավեն այն: Օրինակ՝ Վասպուրականի թագավորության հռչակումը տեղի է ունեցել Ատրպատականի Սաջյան ամիրայության մասնակցությամբ, որին հովանավորում էր Արաբական խալիֆայությունը:

2. Բացատրե՛ք Բագրատունյաց Հայաստանում թագավորական նստավայրի հաճախակի փոփոխության առնվազն մեկ պատճառ և երկու փաստարկով հիմնավորե՛ք Անին մայրաքաղաք հռչակելու անհրաժեշտությունը:

Պատասխան: Բագրատունյաց Հայաստանում թագավորության հռչակման ժամանակ նախկին մայրաքաղաք Դվինը շարունակում էր գտնվել արաբների ձեռքում: Հայ քաղաքական վերնախավը շարունակում էր հենց Դվինն ընկալել իբրև մայրաքաղաք, և հենց այդ պատճառով Բագրատունիները քանիցս փորձեր են ձեռնարկել այն ազատագրելու ուղղությամբ: Այնուհանդերձ, շուրջ մեկ դար բոլոր փորձերը ձախողվում էին: Առաջին Բագրատունիները իբրև թագավորի նստավայր են օգտագործել իրենց տոհմական նստավայրերը՝ Բագարանը և Երազգավորսը (Շիրակավանը), իսկ Աբասը, որ մինչ թագավոր դառնալը սպարապետ էր, թագավոր դառնալուց հետո շարունակել է մնալ սպարապետի նստավայր Կարսում, որը, փաստորեն, դարձել է արքայանիստ: Նույնը շարունակել է Աշոտ III Ողորմածը, որը Դվինի ազատագրման հերթական անհաջող փորձից հետո որոշել է պետության համար ստեղծել նոր մայրաքաղաք՝ Անին:
Բագրատունի արքաները ձգտում էին ցույց տալ, որ իրենց գործունեության արդյունքում վերականգնվել է Արշակունյաց Հայաստանի հզորությունը, և այդ նոր վիճակի համար անհրաժեշտ է նոր մայրաքաղաք, ընդ որում՝ մայրաքաղաքի բացումը պիտի զուգորդվեր Աշոտ III Ողորմած թագավորի նոր թագադրությամբ, որով թագավորական իշխանությունը վերաիմաստավորվում և նորովի էր արժևորվում: Անիի ընտրությունը պայմանավորված էր նրանով, որ այն գտնվում էր միջազգային առևտրի խաչմերուկներում և միաժամանակ Ախուրյան գետի հովտում այնպիսի դիրք ուներ, որ պարիսպների նոր գծի կառուցման պարագայում կունենար պաշտպանական հրաշալի հնարավորություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՆՈՐ ԴԱՐԵՐՈՒՄ
ԹԵՄԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ XVIII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ: (10 ՄԻԱՎՈՐ)

1. Նկարագրե՛ք XVIII դարի երկրորդ կեսին Հայաստանի ազատագրության մեկ ծրագիր՝ նշելով դրա հեղինակ(ներ)ին, բացատրե՛ք դրանում Ռուսական կայսրությանը վերապահվող դերի երկու պատճառ:

Պատասխան: XVIII դարի երկրորդ կեսին Հայաստանի ազատագրության մի քանի ծրագրեր են կազմվել: Դրանցից առաջինի հեղինակը աստրախանցի մեծահարուստ Մովսես Սարաֆյանն էր: Նրանից հետո կազմվել են Հարավային և Հյուսիսային ծրագրերը: Հարավային ծրագիրը կազմվել է հնդկահայ մեծահարուստ Շահամիր Շահամիրյանի գլխավորած Մադրասի խմբակի կողմից: Ծրագիրը կազմված էր 20 կետերից: Այն նախատեսում էր Ռուսական կայսրության օգնությամբ Հայաստանի անկախության վերականգնումը, ընդ որում՝ Հայաստանը պետք է հռչակվեր խորհրդարանական հանրապետություն՝ օրենսդիր և գործադիր իշխանության մարմիններով: Կառավարությունը՝ գործադիր մարմինը, պետք է ղեկավարվեր ազգությամբ հայ նախարարի կողմից: Օրենսդիր մարմինը կոչվելու էր Հայոց տուն: Գործադիր մարմնի ղեկավարը ընտրվելու էր Հայոց տան կողմից: Հայաստանում 20 տարի ժամկետով պետք է տեղակայվեր ռուսական 6 հազարանոց զորքը, իսկ պատերազմի դեպքում Հայաստանը պետք է ռազմական օգնություն

տրամադրեր Ռուսաստանին: Երկու երկրների միջև հաստատվելու էր ազատ երթևեկություն: Հայաստանը պետք է Պետերբուրգում ունենար սեփական դեսպանությունը: Հայաստանի բարձրագույն պաշտոնյաներ և հողի սեփականատերեր կարող էին լինել միայն Հայ Առաքելական Եկեղեցու հետևորդները:
Ռուսական կայսրությունը 1768-1774 և 1787-1791 թթ. երկու հաջող պատերազմներ է մղել Օսմանյան կայսրության դեմ, իսկ 1783 թ. Գեորգիևսկում ստորագրել է դաշնագիր Արևելյան Վրաստանի թագավորի հետ, որով նաև մուտք է գործում պարսկական ազդեցության գոտի: Այս պայմաններում հայերի մոտ տպավորություն էր ստեղծվում, որ Ռուսական կայսրությունն իր տարածքով արդեն մոտ է Հայաստանին և նրա հակաթուրքական դիրքորոշման շնորհիվ իրատեսական է հայկական տարածքների ազատագրումը և հայկական պետության վերականգնումը նրա միջոցով: Հայերի համար լրացուցիչ գործոն է եղել օգնության փնտրտուքը քրիստոնեական աշխարհում, և քրիստոնյա ուժեղ պետության ի հայտ գալը մահմեդական տերությունների կողմից տնօրինվող տարածաշրջանում համոզմունք էր ձևավորում, որ հենց Ռուսական կայսրության միջոցով է հնարավոր հասնել մուսուլմանների լծից ազատմանը:

2. XVIII դարի երկրորդ կեսին երկու տարբեր երկրներում կազմված Հայաստանի ազատագրության ծրագրերի օրինակներով ներկայացրե՛ք և բացատրե՛ք անկախության վերականգնումից հետո Հայաստանում ձևավորվելիք քաղաքական համակարգի երկուական տարբերություն և մեկ ընդհանրություն:

Պատասխան: XVIII դարի երկրորդ կեսին Հայաստանի ազատագրության համար կազմված բոլոր երեք ծրագրերի դեպքում էլ առանցքային էր համարվում հայկական պետականության վերականգնումը: Հարավային ծրագրով նախատեսվում էր ստեղծել հանրապետություն՝ խորհրդարանական կառավարման համակարգով, իսկ Հյուսիսային ծրագրով՝ թագավորություն՝ բացարձակ միապետության կառավարման համակարգով: Վերջինս նախատեսված էր նաև Մովսես Սարաֆյանի ծրագրով: Հարավային ծրագիրը նախատեսում էր, որ Հայաստանի կառավարության ղեկավարը պետք է ընտրվեր օրենսդիր մարմնի՝ Հայոց տան կողմից, իսկ Հյուսիսային ծրագրում նշվում էր, որ Հայաստանի թագավորը պետք է ընտրվեր Ռուսաստանի կայսեր կողմից: Երկու ծրագրերի պարագայում էլ նշվում էր, որ հայկական պետության անվտանգությունն ապահովելու նպատակով Հայաստանում պետք է տեղակայվեր ռուսական զորք:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՆՈՐԱԳՈՒՅՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ
ԹԵՄԱ՝ ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ: (10 ՄԻԱՎՈՐ)

1. Ներկայացրե՛ք երկու պատճառ, թե ինչու ԽՍՀՄ-ում Վերակառուցման քաղաքականության ժամանակ Արցախի հայությունը բարձրացրեց Խորհրդային Ադրբեջանի կազմից դուրս գալու և Խորհրդային Հայաստանի կազմ մտնելու հարցը:

Պատասխան: 1921 թ. հուլիսի 5-ին ՌԿԿ կենտկոմի կովկասյան բյուրոյի պլենումի որոշումը, որով Արցախը բռնակցվեց Խորհրդային Ադրբեջանին, և նրա մի մասում երկու տարի անց ստեղծվեց Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը (ԼՂԻՄ), արցախահայությունը մշտապես համարել է

անարդարացի: Արցախի հայությունը տասնամյակներ շարունակ նկատել է, թե ինչպես են Խորհրդային Ադրբեջանի իշխանությունները ԼՂԻՄ-ում իրականացնում ադրբեջանցիների զանգվածային վերաբնակեցումներ և փոխում ժողովրդագրական պատկերը: Աչքի տակ ունենալով Նախիջևանի Ինքնավար Հանրապետության սրընթաց հայաթափման օրինակը՝ արցախահայությունն օբյեկտիվ մտավախություն ուներ, որ նույնը տեղի է ունենալու Արցախում: Բացի այդ՝ ԼՂԻՄ-ում ակնհայտորեն նկատում էին, որ Խորհրդային Ադրբեջանի իշխանությունները հետևողականորեն իրականացնում էին ԼՂԻՄ-ը Խորհրդային Ադրբեջանի մյուս տարածքների համեմատ հետամնաց վիճակում պահելու քաղաքականություն, մասնավորապես՝ այստեղ չէին կառուցվում արդյունաբերական ձեռնարկություններ, չէին բացվում բարձրագույն ուսումնական հաստատություններ և այլն, ինչի պատճառով հայ երիտասարդության մի մասը ստիպված գնում էր Բաքու՝ բարձրագույն կրթություն և որակավորված աշխատանք գտնելու համար: Այս ամենին գումարվում է 1960-ական թթ. երկրորդ կեսին հայ երեխայի սպանության ու շինծու արդարացման դեպքը, Շուշիի հայկական թաղամասի վերջնական քանդումը և այլն, որոնք ցույց են տալիս Խորհրդային Ադրբեջանի կազմում մնալու անհնարինությունը: Այս պայմաններում Արցախի հայությունը միակ ելքը տեսնում էր Խորհրդային Հայաստանի հետ վերամիավորվելու մեջ:

2. Երկու փաստարկով բացատրե՛ք, թե ինչպիսին էր խորհրդային կենտրոնական իշխանության վերաբերմունքը Արցախյան շարժման նկատմամբ շարժման առաջին տարվա ընթացքում (բացատրության մեջ ներկայացրե՛ք կենտրոնական իշխանության կողմից տրված մեկ որակում և կայացված մեկ որոշում՝ դրանց հիման վրա շարադրելով Ձեր ընդհանուր պատասխանը):

Պատասխան: ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունները (ԽՄԿԿ կենտկոմի քաղբյուրոն) 1988 թ. փետրվարի 21-ին, այսինքն՝ ԼՂԻՄ մարզխորհրդի 20-րդ գումարման նստաշրջանի պատմական որոշման հաջորդ իսկ օրը, Արցախյան շարժումը որակեցին իբրև «ծայրահեղական»: Մեկ ամիս անց՝ մարտի 24-ին, ԽՄԿԿ կենտկոմի և մինիստրների խորհրդի որոշմամբ՝ Արցախյան հիմնախնդիրը բնորոշվեց իբրև սոցիալ-տնտեսական խնդիր, որի լուծման համար Խորհրդային Ադրբեջանի ղեկավարությանը տրվեց 400 մլն ռուբլի գումար: Քանի որ իրականում խնդիրը ազգային էր, այն, ի վերջո, քննարկվեց ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանում, և ընդառաջ գնալով Խորհրդային Հայաստանին վերամիավորվելու մասին ԼՂԻՄ մարզխորհրդի 20-րդ գումարման նստաշրջանի պատմական որոշմանը՝ որոշվեց ընդունել առաջարկը և վերամիավորման մասին նույն խնդրանքով դիմել ԽՍՀՄ Գերագույն խորհրդին: 1988 թ. հուլիսի 18-ին գումարվեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նիստ, որը մերժեց ԼՂԻՄ մարզխորհրդի և ՀԽՍՀ Գերագույն խորհրդի խնդրանքները: Խորհրդային կենտրոնական իշխանությունների այս վերաբերմունքը բացատրվում էր նրանով, որ տարածքային փոփոխություն կատարելու դեպքում իրենք ստիպված էին լինելու վերանայել ազգային հարցի շուրջ ԽՍՀՄ մյուս հատվածներում կայացված նմանատիպ որոշումները, իսկ դա հղի էր լինելու ԽՍՀՄ ներքին սահմանների շարունակական փոփոխությունների և անկայունության վտանգով, որից ամեն կերպ խուսափում էր Միխայիլ Գորբաչովը: Ինչպես հետագայում պարզ դարձավ, վերջինս չկարողացավ խուսափել ԽՍՀՄ այլ օջախներում իրավիճակի ապակայունացումից:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ (12 ՄԻԱՎՈՐ)

Ուշադրությո՛ւն. Համաշխարհային պատմության բաժնում հարկավոր է պատասխանել <u>երկու</u> առաջադրանքի: Առանց շտապելու կարդացե՛ք և ուսումնասիրե՛ք բերված աղբյուրները: Պատասխանե՛ք հարցերին՝ հիմնավորելով տրված աղբյուրներում առկա փաստերով:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 1 (6 ՄԻԱՎՈՐ)

Աղբյուր Ա

Նկարը վերնագրված է «Ազատությունը առաջնորդում է ժողովրդին», հեղինակ՝ Էժեն Դելակրուա, 1830թ., Ֆրանսիա: Այն ստեղծվել է 1830 թ. Հուլիսյան հեղափոխությունից հետո և արտացոլում է Բուրբոնների վերականգնված միապետության դեմ ժողովրդական ընդվզումը: Կենտրոնում պատկերված կինը ազատության այլաբանական կերպարն է: Նա մի ձեռքում պահում է Ֆրանսիայի եռագույն դրոշը, իսկ մյուսում՝ մուշկետ (հրացան): Շուրջը՝ հասարակության տարբեր շերտերի ներկայացուցիչներ են՝ բանվորներ, բուրժուազիայի ներկայացուցիչներ և երիտասարդ հեղափոխականներ, ինչը խորհրդանշում է ժողովրդի միասնությունը հեղափոխության ընթացքում:

Աղբյուր Բ

Հատվածներ պատմագետ Մորիս Ագուլհոնի «1830 թվականի հեղափոխությունը 19-րդ դարի Ֆրանսիայի պատմության մեջ» հոդվածից:

1830 թվականի հեղափոխությունը որոշակի կերպով գնահատելը նշանակում է կարևորել լիբերալիզմը[1], 1789 թ. հեղափոխությունը և դրանց հետ կապված գաղափարները՝ միաժամանակ մերժելով երկու այլ երևույթներ՝ ավտորիտար[2], կղերապետական միապետությունը[3] և Նապոլեոնյան բոնապետությունը:…

Պատմությունը միշտ բազմաշերտ և հակասական է: 1830 թվականի իրադարձությունները հասկանալու համար պետք է ընդունել, որ ազատությունը պարզապես դրոշ կամ խորհրդանիշ չէր, իսկ բուրժուազիան՝ միայն կեղծավոր ուժ չէր. իրականությունը շատ ավելի բարդ էր:

Ֆրանսիական հեղափոխության պատմական տարեգրքեր, 1980 թ., էջ 483-498:

Հարց 1

Համեմատելով Աղբյուր Ա-ն և Աղբյուր Բ-ն և օգտագործելով ձեր պատմական գիտելիքները՝ բացատրեք, թե ինչպե՞ս էին 1830 թ. հեղափոխականները հիմնավորում ազատության գաղափարը: Որքանո՞վ հաջողվեց նրանց իրականացնել իրենց նպատակները: Պատասխանեք կոնկրետ պատմական փաստերով:

1830 թ. հուլիսի վերջին Փարիզում սկսում է հեղափոխություն: Վիեննայի վեհաժողովով Ֆրանսիայում վերականգնված Բուրբոնների թագավորական տոհմից Կարլ X-ը իր պահպանողական քաղաքականությամբ երկրում փորձում էր վերականգնել մինչ Ֆրանսիական մեծ հեղափոխությունն ընկած շրջանի միապետությունը, որը ժողովուրդն արդեն մեկ անգամ մերժել էր: **Տե՛ս Աղբուր Բ** 1789 թ. հեղափոխությունը և դրանց հետ կապված գաղափարները՝ միաժամանակ մերժելով երկու այլ երևույթներ՝ ավտորիտար, կղերապետական միապետությունը և Նապոլեոնյան դիկտատուրան:…

Նապոլեոնյան դիկտատուրան ևս մերժելի էր, չնայած Նապոլեոն Բոնապարտի ընդունած քաղաքացիական օրենսգրքի և վարչական, կրոնական ձեռնարկումների հին կարգերի կողմնակիցների հետ լինելով հակասության մեջ, նրանց դեմ դիմում էր խստությունների, իշխանությունը կենտրոնացնելով իր ձեռքում: Ներքին անկայուն և արտաքին քաղաքական

---

[1] Լիբերալիզմ (ազատականություն)- Քաղաքական և գաղափարախոսական հոսանք, որի հիմքում անհատի ազատությունը, մարդու իրավունքների պաշտպանությունը և օրենքի գերակայությունն է.

[2] Ավտորիտարիզմ (տիրազորություն)-Ոչ ժողովրդավարական կառավարման ձև, որի դեպքում իշխանությունը կենտրոնացած է մեկ անձի կամ նեղ խմբի ձեռքում, քաղաքական ազատությունները սահմանափակված են, իսկ հասարակության մասնակցությունը կառավարմանը՝ նվազագույն:

[3] Կղերապետական միապետություն- Միապետական կառավարման ձև, որի դեպքում միապետի իշխանությունը սերտորեն կապված է եկեղեցու հետ, և հոգևորականությունը մեծ ազդեցություն ունի պետական քաղաքականության, օրենքների և հասարակական կյանքի վրա: Նման համակարգում եկեղեցին հաճախ աջակցում է միապետական իշխանությանը:

իրավիճակը՝ իր դեմ դաշինքը(Ռուսաստան, Անգլիա, Ավստրիա, Պրուսիա), Լայպցիգում 1813թ. պարտությունը և հետագա պատմական իրադարձությունները բերեցին ոչ միայն Ֆրանսիայում, նաև Եվրոպայում երբեմն հետադիմական, երբեմն էլ բարենորոգումների իրականացման: Ստեղծված ճգնաժամային իրավիճակները հանգեցրին հեղափոխության:

Կարլ X-ը լուծարեց ընդդիմադիր պատգամավորների խորհուրդը՝ առաջ բերելով բնակչության դժգոհությունը:

1830թ. հեղափոխությանը մասնակցում էին բնակչության բոլոր շերտերը՝ կարևորելով ազատականությունը (լիբերալիզմը): Աղբյուր Ա-ում Ազատության այլաբանական կերպարը, որը խորհրդանշում է ազատությունը, միասնական պայքարը, զենքի ուժով վերահաստատում է Ֆրանսիայի պետականության գաղափարը: Հեղափոխության շարժիչ ուժը բուրժուազիան է, ում միջոցով էլ ֆրանսիական հասարակությունը հասնում է ցանկալի արդյունքին: **Տե՛ս աղբյուր Ա-ն:** Կենտրոնում պատկերված է ազատության այլաբանական կերպարը, որը մի ձեռքում պահում է Ֆրանսիայի եռագույն դրոշը, իսկ մյուսում՝ մուշկետ (հրացան):Նրա շուրջը ներկայացված են հասարակության տարբեր շերտերի ներկայացուցիչներ՝ բանվորներ, բուրժուազիայի ներկայացուցիչներ և երիտասարդ հեղափոխականներ, ինչը խորհրդանշում է ժողովրդի միասնությունը հեղափոխության ընթացքում:

Տե՛ս աղբյուր Բ-ն 1830 թվականի իրադարձությունները հասկանալու համար պետք է ընդունել, որ ազատությունը պարզապես դրոշ կամ խորհրդանիշ չէր, իսկ բուրժուազիան՝ միայն կեղծավոր ուժ չէր. իրականությունը շատ ավելի բարդ էր:

Այսպիսով, 1830թ. Ֆրանսիայում ժողովուրդը պայքար էր մղում հանուն ժողովրդավարական արժեքների, սահմանադրական միապետության հաստատման, որին մասնակցում էին բնակչության բոլոր շերտերը: Ազատական ուժերը կարողացան հաստատել սահմանադրական միապետություն՝ խուսափելով հեղափոխության հետագա խորացումից, իսկ նոր արքա հռչակված դուքս Լուի-Ֆիլիպ Օռլեանցին հայտարարեց, որ հավատարիմ կմնա Սահմանադրությանը:

Հարց 2

Համեմատելով Աղբյուր Ա-ն և Աղբյուր Բ-ն և օգտագործելով ձեր գիտելիքները՝ բացատրեք, թե ի՞նչ կապ կար Արդյունաբերական դարաշրջանի գաղափարական և սոցիալական փոփոխությունների ու Ֆրանսիայի քաղաքական իրավիճակի միջև: Բերեք մեկ եվրոպական երկրի օրինակ, որտեղ տեղի էին ունենում նման գործընթացներ:

Եվրոպայում սկսված տնտեսական և սոցիալական առաջընթացը նոր ժամանակների շեմին հանգեցրեց նոր արդյունաբերական հասարակության ձևավորմանը: Էական դեր ունեին գործարարները (բուրժուա, կապիտալիստ) և բանվորները (պրոլետարներ): Մանուֆակտուրայից անցումը մեքենայական արտադրության հայտնի է արդյունաբերական հեղաշրջում անունով: Արդյունաբերական հեղաշրջման շնորհիվ աճեց աշխատանքի արտադրողականությունը: Զարգացած երկրներում ձևավորվեց ներքին միասնական շուկա, աճեց քաղաքային բնակչությունը:

Լուսավորական շարժումը, Ֆրանսիական Մեծ հեղափոխությունը և հասարակության արդիականացման գաղափարները խթանեցին մշակույթի տարբեր բնագավառների զարգացումը: Փոխվեց մարդկանց կյանքը, նոր հասարակության ձևավորմանը զուգընթաց գիտության նվաճումները ոչ միայն ներդրվեցին արտադրության մեջ, այլև մուտք գործեցին մարդկանց առօրյա կյանք:

Քանի որ, արդյունաբերականացման շրջանում բուրժուազիան դարձավ գործարար կյանքի և արտադրության հիմնական կրողը, ինքն էլ 1830թ. Ֆրանսիական հեղափոխության կազմակերպիչն էր: Բուրժուազիան լինելով նոր տնտեսական ընտրախավի կրողը ձգտում էր հասնել իշխանության, նպաստավոր պայմաններ ստեղծել գործարարության համար և ստանալ մեծ եկամուտներ: Այդ ամենով բուրժուազիան հակասության մեջ էր հին ավատատիրական կարգերի, պետական կառավարման ձևի հետ, որովհետև ներկայացված չէր պետական կառավարման համակարգում: Մյուս կողմից՝ այդ ժամանակաշրջանում գյուղացիները հողազրկվում և դառնում էին վարձու աշխատող՝ բանվոր (պրոլետար): Հասարակության այս շերտը ցանկանում էր բարելավել իրենց աշխատանքային, հասարակական և կենցաղային պայմանները և այդ նպատակով ակտիվ մասնակցեցին ֆրանսիական հեղափոխությանը: Հիմնավորում էին լուսավորական դարաշրջանում ձևավորված ազատականության գաղափարախոսությամբ, որի հիմքում անհատի ազատությունը, մարդու իրավունքների պաշտպանությունը և օրենքի գերակայությունն է: Այն անմիջական կապ ուներ Արդյունաբերական դարաշրջանում հասարակական-սոցիալական փոփոխությունների հետ, որի մասին արդեն ներկայացրեցինք: Հիմք ընդունելով այս գաղափարախոսությունը բուրժուազիան և բանվոր դասակարգը հեղափոխությամբ փորձեցին պաշտպանել իրենց իրավունքները: Տե՛ս Աղբուր Ա, Բ:

1830-ական թթ. սկզբներին հեղափոխություններ էին նաև Բելգիայում, Լեհաստանում, Իտալիայում:

Վիեննայի վեհաժողովով Նիդերլանդների կազմ մտած Բելգիայի մեծ մասը կաթոլիկներ էին և դժգոհ էին իշխող բողոքական նիդերլանդցիների վարած ձուլման քաղաքականությունից: 1830 թ. սեպտեմբերին Բելգիան դուրս եկավ Նիդերլանդների կազմից: Լոնդոնի կոնֆերանսում եվրոպական պետությունները հայտարարեցին, որ ճանաչում են Բելգիայի անկախությունը: Նիդերլանդները Բելգիայի անկախությունը ճանաչեց միայն 1839 թ.: Արդյունքում Եվրոպայում ծնվեց նոր պետություն:

Լեհական թագավորությունը Վիեննայի վեհաժողովով էր ստեղծվել և ներառվել Ռուսաստանի կազմ, ցար Ալեքսանդր I-ը ստեղծել էր սահմանադրություն, որը պարբերաբար խախտում էր: Կատարվում էին բռնաճնշումներ լեհ հասարակական գործիչների նկատմամբ: Այս ամենը առաջացնում էր ազգայնական գաղափարներ:

1830-1831 թթ. Լեհաստանում ապստամբեցին ռուսական տիրապետության դեմ, սակայն պարտվեցին: Եվրոպական պետությունները օգնություն չցուցաբերեցին: Երկիրն անվանապես մնաց որպես Լեհական թագավորություն Ռուսական կայսրության կազմում, սակայն ցարական միապետությունը ճնշում էր լեհերի բոլոր ազգային-ազատագրական ելույթները:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 2 (6 ՄԻԱՎՈՐ)

Աղբյուր Ա

Հատված Կոնգրեսում ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի ելույթից, որտեղ հիմնավորում է ԱՄՆ-ի մասնակցությունը Առաջին համաշխարհային պատերազմին:

2 ապրիլի, 1917թ.

Գերմանական սուզանավերի ներկայիս պատերազմն ընդդեմ առևտրի՝ պատերազմ է ընդդեմ մարդկության: Այն պատերազմ է բոլոր ազգերի դեմ: Սա մարտահրավեր է ողջ մարդկությանը:

...Մեր նպատակն այժմ, ինչպես և այն ժամանակ, խաղաղության և արդարության սկզբունքների պաշտպանությունն է աշխարհում՝ ընդդեմ ավտոկրատիայի[4] և աշխարհում իրապես ազատ ու ինքնակառավարվող ժողովուրդների միջև նպատակների ու գործողությունների այնպիսի համաձայնության հաստատումը, որն այսուհետ կապահովի այդ սկզբունքների պահպանումը:

Աշխարհը պետք է անվտանգ լինի ժողովրդավարության համար: Մենք չենք ձգտում ո՛չ նվաճումների, ո՛չ տիրապետության:

...Մենք գերմանացի ժողովրդի անկեղծ բարեկամներն ենք և չենք ցանկանում ոչինչ այնքան, որքան մեր միջև փոխշահավետ ու մտերիմ հարաբերությունների շուտափույթ վերականգնումը, որքան էլ որ նրանց համար տվյալ պահին դժվար լինի հավատալ, որ այս խոսքերն ասվում են ի սրտե:

Վուդրո Վիլսոն, «Ամերիկանիզմ.Վուդրո Վիլսոնի ելույթները պատերազմի մասին...» գրքից, խմբ.՝ Օ. Մ. Գեյլ, Չիկագո, 1918թ., էջ 36-44:

Աղբյուր Բ

Հատված Վ. Ի. Լենինի աշխատությունից

Ո՞րն է այս պատերազմի պատճառը, որը մարդկությանը աննախադեպ տառապանքներ է բերում: Պատերազմող յուրաքանչյուր երկրի կառավարությունն ու բուրժուազիան միլիոնավոր ռուբլիներ են ծախսում գրքերի ու թերթերի վրա, մեղադրում թշնամուն, ժողովրդի մեջ մոլեգնած ատելություն են հրահրում և ոչ մի ստի առաջ կանգ չեն առնում՝ ներկայանալով որպես անարդարացիորեն հարձակման ենթարկված «պաշտպան» կողմ: Իրականում, սակայն, սա պատերազմ է երկու գիշատիչ մեծ տերությունների խմբերի միջև՝ գաղութները բաժանելու, այլ ազգերին ստրկացնելու, ինչպես նաև համաշխարհային շուկայում շահույթի ու արտոնությունների համար: Սա հետադիմական պատերազմ է, ժամանակակից ստրկատերերի պատերազմը՝ կապիտալիստական ստրկության պահպանման և ամրապնդման համար:

<<Երկերի լիակատար ժողովածու>>, հատոր 27, Մոսկվա, 1969թ., էջ 1-2:

Հարց 1

Համեմատելով և հակադրելով Աղբուր Ա-ն, Աղբուր Բ-ն և օգտվելով ձեր գիտելիքներից բացատրեք թե ի՞նչ պատճառներով սկսվեց Առաջին աշխարհամարտը:

Պատերազմը սկսելու պատճառների վերաբերյալ մեկնաբանությունների ի՞նչ նմանություններ և տարբերություններ եք տեսնում կապիտալիստական և սոցիալիստական համակարգերը ներկայացնող երկու պետությունների ղեկավարների խոսքում:

Առաջին աշխարհամարտին, որը սկսվեց, երբ Գերմանիան 1914 թ. օգոստոսի 1–ին (հին տոմարով՝ հուլիսի 19-ին) պատերազմ հայտարարեց Ռուսաստանին, աշխարհում ձևավորվել էր

[4] Ավտոկրատիա- Ինքնակալություն՝ մենիշխանություն, բռնապետություն: Անձի լիիշխանության վրա հիմնված կառավարման ձև: Ավտոկրատիայի շարքին են դասվում կառավարման բռնապետական ձևերը և բացարձակ միապետությունները:

երկու ռազմաքաղաքական դաշինքներ, որոնց միջև առկա խորը հակասությունները սրվեցին և ռազմական բախումը դարձավ անխուսափելի: Անտանտ՝ Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Ռուսաստան և Քառյակ միություն՝ Գերմանիա, Ավստրո-Հունգարիա, Օսմանյան կայսրություն, Իտալիա (1915թ. դուրս եկավ), Բուլղարիա: Սա դաշինքների հիմնական կազմն էր պատերազմի ընթացքում, որը համալրվում էր նաև նոր երկրներով, ինչպես օրինակ, ԱՄՆ-ն 1917թ. միացավ Անտանտ դաշինքին:

Ըստ բնույթի պատերազմի պատճառները չորսն էին՝

✓ **Տարածքային** – նոր գաղութատեր երկրները՝ Գերմանիան, Իտալիան և Ճապոնիան ձգտում էին ազդեցության ոլորտների և տարածքների վերաբաժանման:

✓ **Տնտեսական**- ձեռք բերելով առևտրի համար նոր շուկաներ, տեր դառնալով հումքի հարուստ պաշարների՝ արդունաբերական զարգացած երկրները կապահովեին տնտեսական և ֆինանսական գերազանցություն իրենց հակառակորդների նկատմամբ:

✓ **Ռազմական-** մեծ տերությունների միջև ծավալվեց սպառազինությունների մրցավազք: Ռազմական առումով հասնել գերազանցության հակառակորդների նկատմամբ, պատրաստ լինել պաշտպանելու իրենց պետությունը, գաղութները և շուկաները կամ նվաճելու նոր տարածքներ և շուկաներ:

✓ **Գաղափարական**- մեծ տարածում գտան ազգայնամոլությունը և կայսերապաշտությունը: Տերությունների իշխող վարչակարգերն անթաքույց քարոզում էին ատելություն ու թշնամանք այլ ազգերի նկատմամբ հիմնավորում իրենց զավթողական նպատակները, կատարելով պատերազմի գաղափարական նախապատրաստում:

Ֆրանսիայի նպատակն էր վերադարձնել ֆրանս–պրուսական պատերազմի ժամանակ կորցրած տարածքները, զավթել Հռենոսի ձախ ափը և գերմանական գաղութները: Ռուսաստանը՝ գրավել Բոսֆորի ու Դարդանելի նեղուցները և դուրս գալ Միջերկրական ծով, գրավել Արևմտյան Հայաստանը և հաստատվել Մերձավոր Արևելքում: Գերմանիայի նպատակն էր հաստատել իր գերիշխանությունը Եվրոպայում՝ զավթելով անգլիական և ֆրանսիական գաղութները և մասնատել Ռուսաստանը: Ավստրո–Հունգարիան՝ լիակատար ազդեցությունը հաստատել Բալկաններում: Օսմանյան կայսրության ծրագիրն էր իրագործել պանթյուրքիզմը՝ գրավել Կովկասը, Ղրիմը, Իրանական Ատրպատականը և ծավալվել մինչև Ալթայ:

Քողարկելով իրենց զավթողական ծրագրերը՝ երկու խմբավորումների անդամները հայտարարում էին, թե կռվում են «փոքր» ազգերի իրավունքների և հակառակորդի բռնակալ տիրապետությունից նրանց ազատագրելու համար: **Տես Աղբյուր Ա** ...Աշխարհը պետք է անվտանգ լինի ժողովրդավարության համար: Մենք չենք ձգտում ո՛չ նվաճումների, ո՛չ տիրապետության: **Տես Աղբյուր Բ** ...սա պատերազմ է երկու գիշատիչ մեծ տերությունների խմբերի միջև՝ գաղութները բաժանելու, այլ ազգերին ստրկացնելու, ինչպես նաև համաշխարհային շուկայում շահույթի ու արտոնությունների համար:

1917 թ. ավելացավ պատերազմող երկրների քանակը: Այդ ժամանակ ԱՄՆ առևտուր էր անում երկու հակամարտող կողմերի հետ, ինչը հսկայական եկամուտներ էր բերում: Եվ պատահական չէ, որ աշխարհի ոսկու պաշարի կեսից ավելին հայտնվեց ամերիկյան դրամատներում: Սակայն ԱՄՆ–ն որոշեց միանալ Անտանտին, որովհետև վերջինիս հաղթանակը կասկած չէր հարուցում: Պատերազմին մասնակցելով՝ նա նպատակադրվել էր տարածել իր ազդեցությունը Լատինական

Ամերիկայում, Խաղաղ օվկիանոսի ավազանում և Հեռավոր Արևելքում: Այն հիմնավորելով ինքնակալության դեմ պայքարով, ժողովրդավարության և խաղաղության պահպանմամբ: **Տես Աղբյուր Ա-ն** ... Մեր նպատակն այժմ, ինչպես և այն ժամանակ, խաղաղության և արդարության սկզբունքների պաշտպանությունն է աշխարհում՝ ընդդեմ ավտոկրատիայի... Աշխարհը պետք է անվտանգ լինի ժողովրդավարության համար: Մենք չենք ձգտում ո՛չ նվաճումների, ո՛չ տիրապետության:

Ռուսաստանում նույն թվականի հոկտեմբերի 25-ին (նոր տոմարով՝ նոյեմբերի 7–ին) տապալվեց Ժամանակավոր կառավարությունը և նույն օրը Բոլշևիկները խորհուրդների համառուսաստանյան երկրորդ համագումարով Ռուսաստանը հռչակեցին Խորհրդային Հանրապետություն: Ստեղծեցին նոր կառավարություն՝ Ժողովրդական կոմիսարների խորհուրդ առաջնորդ Վ. Լենինի գլխավորությամբ: Նրանք քայլեր կատարեցին ազգերի ինքնորոշման սկզբունքի հիման վրա ազգային հարցը լուծելու համար:

Բոլշևիկների առաջնահերթ նպատակն էր Ռուսաստանում ստեղծել սոցիալիստական հասարակություն: Նրանք ծրագրել էին նաև հրահրել համաշխարհային հեղափոխություն և սոցիալիստական կարգեր հաստատել աշխարհի շատ երկրներում, առաջին հերթին՝ պատերազմող եվրոպական պետություններում:

Բոլշևիկները սկիզբ դրեցին արդյունաբերական քաղաքակրթության շրջանակներում մի նախագծի իրագործման, որն ընդունված է անվանել սոցիալիզմ կամ կոմունիզմ: Այն նախատեսում էր ստեղծել համընդհանուր սեփականության և կոլեկտիվ արտադրության վրա հիմնված հասարակարգ, որը մերժում էր կապիտալիստական համակարգը: **Տե՛ս Աղբյուր Բ** Իրականում, սակայն, սա պատերազմ է երկու գիշատիչ մեծ տերությունների խմբերի միջև՝ գաղութները բաժանելու, այլ ազգերին ստրկացնելու, ինչպես նաև համաշխարհային շուկայում շահույթի ու արտոնությունների համար: Սա ամենառեակցիոն պատերազմն է, ժամանակակից ստրկատերերի պատերազմը՝ կապիտալիստական ստրկության պահպանման և ամրապնդման համար:

Այսպիսով, ԱՄՆ-ն աշխարհում իր ազդեցության տարածման, ժողովրդավարական արժեքների պահպանման և ազգերի ինքնորոշման իրավունքների պաշտպանությամբ, Խորհրդային Ռուսաստանը համաշխարհային հեղափոխության և սոցիալիստական կարգերի հաստատման համար, առաջին աշխարհամարտը սկսելու պատճառները տեսնում էին մասնակից երկրների կողմից ինքնակալության, գաղութային համակարգի պահպանման և ընդլայնման, ազգերի իրավունքների ոտնահարման մեջ: Երկուսն էլ առաջարկում էին վերը նշված պատճառները վերացնելու և աշխարհում կարգ ու կանոն հաստատելու իրենց տարբերակները՝ ԱՄՆ-ն ինքնակալության դեմ պայքարով և աշխարհում իր հովանավորությամբ ժողովրդավարական կարգեր հաստատմամբ, Խորհրդային Ռուսաստանը համաշխարհային հեղափոխության և սոցիալիստական կարգերի հաստատմամբ: Տես աղբյուր Ա,Բ:

Հարց 2

Օգտվելով Աղբյուր Ա-ից, Աղբյուր Բ-ից և ձեր գիտելիքներից՝ ներկայացրե՛ք և բացատրե՛ք, մասնակից տերությունները պատերազմից հետո ի՞նչ քայլեր ձեռնարկեցին ապագայում նոր պատերազմները կանխելու համար:

Նշված աղբյուրների հեղինակները այդ հարցում ի՞նչ դերակատարում ունեցան: Բերեք պատմական փաստեր:

Խորհրդային Ռուսաստանում նոր իշխանությունը դիմեց պատերազմող կողմերին՝ առաջարկելով կնքել արդարացի հաշտություն առանց բռնազավթումների և ռազմատուգանքների: Սակայն բոլշևիկներն իրենց հաշվարկներում սխալվել էին: Երեք ամիս տևած բանակցություններից հետո նրանք ստիպված էին Բրեստ–Լիտովսկում 1918թ. մարտի 3-ին անարդարացի և ստորացուցիչ պայմաններով, առանց Անտանտի դաշնակիցների առանձին (սեպարատ) պայմանագիր կնքել Քառյակ դաշինքի հետ: Ռուսաստանը հրաժարվեց Լեհաստանից, Ուկրաինայից, Բելառուսի մեծ մասից, Մերձբալթիկայից և վճարեց խոշոր ռազմատուգանք:

Այսպիսով, Խորհրդային Ռուսաստանը դեռ պատերազմը չավարտված դուրս եկավ հակամարտությունից:

Աշխարհամարտի արդյունքներն ամփոփելու համար 1919թ. հունվարի 18–ին հրավիրվեց Փարիզի խաղաղության խորհրդաժողովը: Մասնակցում էին 32 երկրների պատվիրակություններ: Սակայն, գերիշխում էր Մեծ հնգյակը՝ ի դեմս ԱՄՆ–ի նախագահ Վուդրո Վիլսոնի, Մեծ Բրիտանիայի վարչապետ Լլոյդ Ջորջի, Ֆրանսիայի վարչապետ Ժորժ Կլեմանսոյի, Ճապոնիայի վարչապետ մարքիզ Սայոնիի և Իտալիայի վարչապետ Վիտորիո Օռլանդոյի:

1919 թ. հունիսի 28–ին Վերսալյան պալատում ստորագրվեց Գերմանիայի հետ հաշտության պայմանագիր: Հետո հաշտության պայմանագրեր կնքվեցին նաև Գերմանիայի նախկին դաշնակիցների՝ Ավստրիայի, Բուլղարիայի, Հունգարիայի և Օսմանյան կայսրության հետ, որոնց արդյունքում ձևավորվեց Վերսալյան համակարգը:

Հեռավոր Արևելքում խնդիրների կարգավորման նպատակով Վաշինգտոնում հրավիրվեց խորհրդաժողով: Մասնակցում էին ԱՄՆ–ի, Մեծ Բրիտանիայի, Ճապոնիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Բելգիայի, Հոլանդիայի, Պորտուգալիայի և Չինաստանի պատվիրակությունները:

Վերսալ–վաշինգտոնյան համակարգի ստեղծումով ձևավորեց հետպատերազմյան նոր աշխարհակարգ: Դրանում ներառվեցին ԱՄՆ–ի նախագահ Վ. Վիլսոնի 14 կետերը և առաջ քաշվեց մի շարք նոր գաղափարներ՝ Ազգերի լիգայի ստեղծում, մանդատային համակարգի ներմուծում, Միջազգային արդարադատության մշտական դատարանի հիմնում, հավաքական անվտանգության սկզբունք և այլն:

Սակայն, Վերսալ-Վաշինգտոնյան համակարգը կայուն չէր: Պարտված երկրների ուսերին թողնվեց հետպատերազմյան կարգավորման ողջ ծանրությունը: Եվրոպայում նոր պետությունների սահմանները որոշվեցին առանց հաշվի առնելու այնտեղ բնակվող ժողովուրդների շահերը:

Խորհրդային Ռուսաստանը ներկայացված չէր ո՛չ Փարիզի, ո՛չ Վաշինգտոնի խորհրդաժողովներում: Նրան դուրս թողեցին ոչ միայն Վերսալ-վաշինգտոնյան համակարգից, այլև կազմակերպեցին զինված ներխուժում, իսկ հետո բանակցում էին իբրև պատերազմում պարտված երկրի:

Վերսալ–վաշինգտոնյան համակարգը հատկապես թուլացավ, երբ ԱՄՆ–ը հրաժարվեց Վերսալյան պայմանագիրը վավերացնելուց և որդեգրեց մեկուսացման քաղաքականություն: Նա չանդամակցեց Ազգերի լիգային և Գերմանիայի հետ 1921թ. առանձին հաշտության պայմանագիր կնքեց: Ի ցույց դնելով այն գաղափարները, որոնք կոնգրեսում հնչեցրել էր նախագահ Վ. Վիլսոնը:

Տես աղբյուր Ա-ն ...Մենք գերմանացի ժողովրդի անկեղծ բարեկամներն ենք և չենք ցանկանում ոչինչ այնքան, որքան մեր միջև փոխշահավետ ու մտերիմ հարաբերությունների շուտափույթ

վերականգնումը, որքան էլ որ նրանց համար տվյալ պահին դժվար լինի հավատալ, որ այս խոսքերն ասվում են ի սրտե:

Այսպիսով, հետպատերազմյան համակարգի հիմնական նպատակը պետք է լիներ միջազգային հարաբերություններում անխախտ հավասարակշռության ստեղծումը, բայց դրան հասնել չհաջողվեց: